

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱԿԱՐԺԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՊՈՂՈՍՅԱՆ ՍԱԹԵՆԻԿ ՍԱՄՎԵԼԻ

ՄՏԱԿՈՐ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՈՎ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆԻ
ՈՒՍՈՒՄՆԱԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ
ՄԱՆԿԱԿԱՐԺԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԺԳ.00.03-«Հատուկ մանկավարժություն» մասնագիտությամբ
մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական
աստիճանի հայցման ատենախոսության

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

Երևան-2014

Ատենախոսության թեման հաստատվել է Խ.Աբովյանի անվան հայկական
պետական մանկավարժական համալսարանում

- Գիտական ղեկավար՝ Մանկավարժական գիտությունների
թեկնածու, դոցենտ՝ Զ. Հ. Զոհրաբյան
- Պաշտոնական ընդդիմախոսներ՝ Մանկավարժական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր՝ Մ. Մ. Մանուկյան
- Մանկավարժական գիտությունների
թեկնածու, դոցենտ՝ Ն. Ա. Ներկարարյան
- Առաջատար կազմակերպություն՝ Ֆիզիկական կուլտուրայի հայկական
պետական ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կկայանա 2014թ-ի դեկտեմբերի
4-ին, ժամը 12⁰⁰-ին Խ.Աբովյանի անվան հայկական պետական
մանկավարժական համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի («Մանկավարժություն»)
020 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0010, Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ.Աբովյանի անվան հայկական
պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2014 թ-ի նոյեմբերի 4-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար, մանկավարժական
գիտությունների թեկնածու, դոցենտ՝

Ա. Հ. ՍՎԱԶՅԱՆ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Հայտնի է, որ դպրոցականների աշխատանքային ուսուցման հարցերը միշտ էլ գտնվել են ընդհանուր և հատուկ մանկավարժների ուշադրության կենտրոնում: Տվյալ խնդրի շրջանակներում անցկացվել են բազմաթիվ հետազոտություններ տարբեր ուղղություններով. բնականոն զարգացում ունեցող դպրոցականների ուսումնական գործունեության ուսումնասիրում (Յ. Գրաբալ, 1987; Յ. Վ. Քեփին 1999 և այլք), սովորողների գործունեության արդյունավետության վրա շարժառիթների ազդեցության (Ա.Մ. Մաթյուշկին, 1979; Մ. Ն. Լյուկյանով, 2001, Դ. Վ. Տոլդատով, 2001 և այլք), մտավոր զարգացման խնդիրներով սովորողների ուսումնական գործունեության առանձնահատկությունների ուսումնասիրում (Շ.Լ. Միրսկի, 1990, 1992, 1999; Է. Ա. Եյուխանովա, 1999) և այլք: Ընդ որում դրա համար առաջարկվել են տարբեր եղանակներ՝ աշխատանքի կոլեկտիվ ձևի կիրառման ուղիով (Յ. Կ. Բաբանսկի, 1982; Գ. Վ.Տուխոժոլսկի, 1988; Ա. Ք. Մալլեր, 1998, 2000, 2003; Կ. Բարտ, 2006, Մ. Ա. Միքտչյան, 2013 և այլք), սովորողների գործունեության գնահատականի սահմանված համակարգի միջոցով (Մ.Ա. Ամոնաշվիլի,1984; Գ. Ա. Կարովա, 2000; Մ. Լյուկյանովա, 2001; Յ. Շ. Իլյին, 2006 և այլք), երեխաների համար գիտելիքների նշանակության ցուցադրման միջոցով (Ա. Ի. Կապուստին, 1990; Ն. Վ. Կլինովա, 1999; Շ. Ի. Արխանգելսկի, 2000 և այլք): Սակայն գործնականորեն վերը թվարկված ուսումնական գործունեության ձևավորման բոլոր ուղիներն ու միջոցները վերաբերվել են ընդամենը բնականոն զարգացում ունեցող երեխաներին:

Մտավոր զարգացման խնդիրներով կրտսեր դպրոցականի ուսուցման համակարգում աշխատանքային ուսուցման, նրանց ինքնուրույն կյանքին նախապատրաստելու գործնական կարողությունների և հմտությունների ձեռքբերման հարցերը միշտ էլ առաջատար տեղ են գրավել:

Սակայն հատուկ (օժանդակ) դպրոցի տարրական դասարաններում «Տեխնոլոգիա» առարկայի դասավանդման ընթացքում մտավոր զարգացման խնդիրներ ունեցող կրտսեր դպրոցականի աշխատանքային դաստիարակության և ուսումնաաշխատանքային գործունեության կազմակերպման մոտեցումները պահանջում են կատարելագործում: Մինչ այժմ տվյալ առարկայի դասավանդման շրջանակներում մշակված չէ այդ դպրոցականների ուսումնաաշխատանքային գործունեության կազմակերպման օրինակելի ծրագիր, միջոցներ, մեթոդներ և մանկավարժական պայմաններ, ուսումնասիրված չէ այդ երեխաների հետ աշխատող ուսուցիչների և դաստիարակների իրազեկվածության մակարդակը տվյալ հիմնախնդրի վերաբերյալ, որոշված չէ տվյալ թիրախային խմբի երեխաների ուսումնաաշխատանքային գործունեության կազմակերպման մակարդակը: Այս և նմանատիպ այլ հարցերն էլ և որոշում են հիմնախնդրի արդիականությունը, նրա տեսական, գործնական և սոցիալական նշանակությունը:

Հիմնահարցի մշակվածության աստիճանը: Մտավոր զարգացման խնդիրներով կրտսեր դպրոցականի ուսումնական, աշխատանքային և գործունեության այլ տեսակների զարգացման առանձնահատկությունների ուսումնասիրությանն են նվիրված Ա. Կ. Մարկովայի (1991), Վ. Գ. Պետրովայի (2000), Դ. Վ. Սոլոգոտովի (2001), Ա. Ռ. Մալլերի (2003), Վ. Վ. Կորոնկովայի (2004), Կ. Բարտի (2006), Վ. Ս. Իլյինի (2006), Բ. Պ. Պուզանովայի (2008) և այլոց աշխատությունները: Նշված և այլ աշխատություններում բացահայտվում են ուսումնական գործունեության ձևավորման և ճանաչողական պահանջմունքների զարգացման հիմնահարցերը: Սակայն հատուկ (օժանդակ) դպրոցում «Տեխնոլոգիա» առարկայի դասավանդման ընթացքում մտավոր զարգացման խնդիրներով կրտսեր դպրոցականի ուսումնաաշխատանքային գործունեության կազմակերպման և անցկացման մոտեցումները կատարելագործման կարիք ունեն: Այդ առարկայի դասավանդման շրջանակներում մինչև այժմ մշակված չէ նշված դպրոցականների ուսումնաաշխատանքային գործունեության կազմակերպման օրինակելի ծրագիր, ուսումնասիրված չէ այդ դպրոցականների հետ աշխատող ուսուցիչների և դաստիարակների իրազեկվածության մակարդակը տվյալ հիմնախնդրի վերաբերյալ, որոշված չէ այդ երեխաների ուսումնաաշխատանքային գործունեության կազմակերպման մակարդակը: Այս ամենը դժվարացնում է «Տեխնոլոգիա» առարկայի արդյունավետ դասավանդումը, դպրոցականների տեսական գիտելիքների և գործնական կարողությունների ձևավորումը:

Հետազոտության օբյեկտը՝ մտավոր զարգացման խնդիրներով կրտսեր դպրոցականի ուսումնաաշխատանքային գործունեության կազմակերպման գործընթացն է:

Հետազոտության առարկան՝ «Տեխնոլոգիա» առարկայի դասավանդման ընթացքում մտավոր զարգացման խնդիրներով կրտսեր դպրոցականի ուսումնաաշխատանքային գործունեության կազմակերպման մանկավարժական ուղիներն են, միջոցները, մեթոդները:

Հետազոտության վարկածը: Ենթադրում ենք, որ մտավոր զարգացման խնդիրներով կրտսեր դպրոցականի ուսումնաաշխատանքային գործունեության կազմակերպումն ու անցկացումն արդյունավետ կլինի, եթե «Տեխնոլոգիա» առարկայի դասավանդման ընթացքում կիրառվեն մեր կողմից առաջարկվող հետևյալ պայմանները՝

- հաշվի առնվի այդ երեխաների հոգեֆիզիկական զարգացման բնույթը և աստիճանը, երկրորդային խանգարումները, անհատական հնարավորությունները,
- ուսումնաաշխատանքային գործունեության կազմակերպման և անցկացման օրինակելի համակարգը, միջոցները, մեթոդները և դրանց կիրառման պայմանները,
- հաշվի առնվի այդ երեխաների անձնային մի շարք որակները՝ գործունեության հանդեպ դրական պահանջմունքների ձևավորումը,

աշխատանքի հետ կապված դժվարությունները հաղթահարելու կարողությունը, սկսած աշխատանքն ավարտին հասցնելը և այլն:

Հետազոտության նպատակը՝ մտավոր զարգացման խնդիրներով կրտսեր դպրոցականի ուսումնաաշխատանքային գործունեության կազմակերպման մակավորժական ուղիների, միջոցների և մեթոդների մշակումն է:

Հետազոտության առարկան, օբյեկտը, նպատակը սահմանեցին հետևյալ խնդիրները՝

1. ուսումնասիրել մտավոր զարգացման խնդիրներով կրտսեր դպրոցականի ուսումնաաշխատանքային գործունեության կազմակերպման և անցկացման աշխատանքների դրվածքը հատուկ (օժանդակ) դպրոցում,

2. որոշել մտավոր զարգացման խնդիրներով կրտսեր դպրոցականի ուսումնաաշխատանքային գործունեության կազմակերպման ընթացքում կարողությունների, ունակությունների և ինքնուրույնության զարգացման մակարդակը,

3. մշակել մտավոր զարգացման խնդիրներով կրտսեր դպրոցականի ուսումնաաշխատանքային գործունեության կազմակերպման մանկավարժական ուղիները, միջոցները և փորձարարությամբ հիմնավորել դրանց կիրառման արդյունավետությունը:

Հետազոտության տեսական և մեթոդոլոգիական հիմքերն են հանդիսացել՝

- մտավոր հետամնաց կրտսեր դպրոցականների ուսուցման և դաստիարակության տեսությունը (С.Л. Рубинштейн, 1986, В. Г. Петрова, 2001, Л. В. Мардахаев, Д. И. Чемоданова, 2012),

- փոխհատուցման տեսությունը (Л.С. Выготский, 2003, Б. Г. Тупоногов, 2008),

- ուսուցման զարգացնող տեսությունը (Д.Б.Эльконин, 1961, 1974; В.В. Давыдов, 1982; В. П. Кащенко, 1992, А. А. Еремина, 2010),

- մտավոր հետամնաց երեխաների աշխատանքի ուսուցման տեսությունը (Б. И. Пинский, 1977, В.А. Шинкаренко, 2009):

Աշխատանքում կիրառվել են հետազոտության հետևյալ մեթոդները՝

- հատուկ գիտամեթոդական գրականության ուսումնասիրում և վերլուծություն,

- ուսուցիչների և դաստիարակների մանկավարժական աշխատանքի առաջատար փորձի ուսումնասիրում և վերլուծություն,

- հետազոտվողների բժշկական փաստաթղթերի ուսումնասիրում և վերլուծություն,

- հոգեբանամանկավարժական հետազոտման մեթոդներ՝ դիտում, գրույց, հարցում, անկետավորում,

- ստուգողական աշխատանքներ, թեստավորում,

- մանկավարժական փորձարարություն՝ հավաստիացնող, ուսուցանող,

- միամյա մանկավարժական գիտափորձ,

- մաթեմատիկական վիճակագրական մեթոդ:

Հետազոտության գիտական նորույթը

• վերլուծվել են հանրապետության հատուկ (օժանդակ) դպրոցներում ուսումնաաշխատանքային գործունեության կազմակերպման և անցկացման աշխատանքների դրվածքը,

• որոշվել է հատուկ (օժանդակ) և ներառական կրթություն իրականացնող դպրոցների ուսուցիչների և դաստիարակների իրազեկվածության մակարդակը ուսումնասիրվող հիմնախնդրի վերաբերյալ,

• որոշվել է մտավոր զարգացման խնդիրներով կրտսեր դպրոցականի աշխատանքային կարողությունների (աշխատանքի ընթացքում հանդիպած ժվարությունների հաղթահարելը, աշխատանքի նկատմամբ ունեցած հետաքրքրությունները, սկսած աշխատանքն ավարտին հասցնելը և այլն) զարգացման մակարդակը,

• մշակվել են մտավոր զարգացման խնդիրներով կրտսեր դպրոցականի ուսումնաաշխատանքային գործունեության կազմակերպման և անցկացման բովանդակությունը, միջոցները, մեթոդները և դրանց կիրառման պայմանները:

Հետազոտության տեսական նշանակությունը: Տեսականորեն հիմնավորվել է «Տեխնոլոգիա» առարկայի արդյունավետ դասավանդման համար առաջարկված մանկավարժական մոտեցումները և դրանց կիրառման պայմանները, ինչպես նաև փորձարարությամբ ստացած արդյունքները:

Հետազոտության գործնական նշանակությունը: Մշակվել է գործնականում ներդրվել է մտավոր զարգացման խնդիրներով կրտսեր դպրոցականի ուսումնաաշխատանքային գործունեության բովանդակությունը, միջոցները, մեթոդները և դրանց կիրառման մանկավարժական մոտեցումները:

Մշակվել է մտավոր զարգացման խնդիրներով կրտսեր դպրոցականի ուսումնաաշխատանքային գործունեության կազմակերպման և անցկացման օրինակելի համակարգ ու դրա կիրառման մանկավարժական պայմաններ, մասնավորապես ուսումնաաշխատանքային գործունեության նախադրյալների զարգացում, ուսումնաաշխատանքային գործունեության վերաբերյալ տեսական գիտելիքների ձևավորում, «Տեխնոլոգիա» առարկայի գործնական նյութի վերաբերյալ նախնական պատկերացումների ձևավորում և այլն:

Պաշտպանությանն են ներկայացվում հետևյալ հիմնական դրույթները՝

1. հատուկ (օժանդակ) դպրոցում «Տեխնոլոգիա» առարկայի դասավանդման ընթացքում մտավոր զարգացման խնդիրներով կրտսեր դպրոցականի ուսումնաաշխատանքային գործունեության կազմակերպումը և անցկացումն ունի մի շարք առանձնահատկություններ հաշվի չի առնվում այդ երեխաների հոգեֆիզիկական զարգացման մակարդակը և երկրորդային խանգարումները, ուշադրություն չի դարձվում ուսումնաաշխատանքային գործունեության նախադրյալների և դրա վերաբերյալ տեսական գիտելիքների, պատկերացումների նախնական ձևավորմանը և այլն,

2. մտավոր զարգացման խնդիրներով կրտսեր դպրոցականի ուսումնաաշխատանքային գործունեության կազմակերպման օրինակելի համակարգը, մանկավարժական միջոցները, մեթոդները և դրանց կիրառման պայմանները,

3. առաջարկվող մանկավարժական մոտեցումները նպաստում են մտավոր զարգացման խնդիրներով կրտսեր դպրոցականի ուսումնաաշխատանքային գործունեության արդյունավետության մակարդակի բարձրացմանը:

Հետազոտությունն անցկացվել է 2006-2010 թթ երեք փուլերով:

Առաջին կազմակերպչական-որոնողական փուլում (2006-2007թթ.) իրականացվել է մեր կողմից ուսումնասիրվող խնդրի վերաբերյալ գիտաամեթոդական գրականության վերլուծությունը, սահմանվել են ուսումնասիրվող խնդրի հասկացությունների էությունը և բովանդակությունը, հետազոտության նպատակը, առարկան, խնդիրները, մեթոդները, մշակվել են հետագա հետազոտական աշխատանքի ուղիները:

Երկրորդ փուլում փորձարարական (2007-2008թթ.) կատարվել է հատուկ (օժանդակ) դպրոցում «Տեխնոլոգիա» առարկայի դրվածքի և ծրագրի ուսումնասիրում, ուսումնասիրվել է հիմնահարցի վերաբերյալ հատուկ (օժանդակ) դպրոցի ուսուցիչների ու դաստիարակների իրազեկվածության և գործնական կարողությունների զարգացման մակարդակը, ինչպես նաև «Տեխնոլոգիա» առարկայի դասավանդման ընթացքում մտավոր զարգացման խնդիրներով կրտսեր դպրոցականի աշխատանքային կարողությունները: Տվյալ փուլում անցկացվել է մանկավարժական փորձարարություն՝ ուղղված դպրոցականների աշխատանքային կարողությունների զարգացմանը և գործունեության արդյունավետության բարձրացմանը

Երրորդ՝ ընդհանրացնող փուլում (2009-2010 թթ) վերլուծվել, համակարգվել և ընդհանրացվել են տեսական նյութերն ու մանկավարժական փորձարարության արդյունքները, հիմնավորվել և ձևակերպվել են հետազոտության հիմնական հետևությունները, ձևավորվել են ատենախոսությունը և հավելվածը:

Հետազոտության գործընթացում ընդգրկվել են թեթև աստիճանի մտավոր զարգացման խնդիրներով 73 կրտսեր դպրոցական, որոնցից 19-ը անմիջական մասնակցություն են ունեցել մանկավարժական գիտափորձին:

Սոցիոլոգիական հետազոտությանը մասնակցել են հատուկ և ներառական կրթություն իրականացնող դպրոցների 157 ուսուցիչներ և դաստիարակներ, ՀՊՄՀ-ի հատուկ կրթության ֆակուլտետի 78 ուսանողներ:

Հետազոտության հավաստիությունը, հիմնավորվածությունը:

Հետազոտության արդյունքների հավաստիացումը և հիմնավորվածությունը կայանում է հետազոտության բազմակողմանի ուսումնասիրմամբ, հետազոտության ժամանակակից մեթոդների կիրառմամբ, հետազոտության փորձարարական արդյունքների մաթեմատիկական վիճակագրական մշակվածությամբ և որակական վերլուծությամբ:

Ատենախոսության հիմնական արդյունքների հավաստիությունը և հիմնավորվածությունը կայանում է նաև հեղինակի հրապարակումներով, զեկուցումներով, ելույթներով, ստացված տվյալների քննարկումներով և դրանք մանկավարժական գործընթացում ներդնելով:

Հետազոտության արդյունքների փորձարկումը: Հետազոտության հիմնական դրույթները, արդյունքները և հետևությունները քննարկվել են Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հատուկ մանկավարժության ամբիոնի նիստերում (2009-2014թթ.), Երևանի 6, 12, 17 հատուկ (օժանդակ) դպրոցների մանկավարժական խորհրդում: Հրատարակվել է չորս հոդված ըստ ատենախոսության թեմայի:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը - Ատենախոսությունը շարադրված է համակարգչային շարվածքով 156 էջով: Այն կազմված է ներածությունից, 3 գլխից, հետևությունից, օգտագործված 163 անուն գրականության ցանկից և 7 հավելվածից: Տեքստում մեջբերված է 10 աղյուսակ, 9 նկար:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆՂԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունում որոշված է հետազոտության արդիականությունը, նպատակը, օբյեկտը, առարկան, վարկածը, խնդիրներն ու մեթոդները, ներկայացված է աշխատանքի գիտական նորույթը, տեսական, գործնական նշանակությունը և պաշտպանությանը ներկայացվող հիմնական դրույթները:

Առաջին՝ «Հիմնախնդրի դրվածքը, հետազոտության խնդիրները, մեթոդները և կազմակերպումը» գլխում, ներկայացված են «Տեխնոլոգիա» առարկայի դերն ու նշանակությունը մտավոր զարգացման խնդիրներով կրտսեր դպրոցականի ուսումնադաստիարակչական գործընթացում, ուսումնական գործունեության ուսումնասիրության մանկավարժական տեսանկյունները, բացահայտված են հետազոտության ուղղվածությունը, խնդիրները, մեթոդները և կազմակերպումը:

Հաստատված, որ ուսումնասիրվող հիմնահարցն արդիական է, ունի տեսական, գործնական և սոցիալական կարևոր նշանակություն: Սակայն հատուկ մանկավարժության մեջ այն գրեթե ուսումնասիրված չէ: Այս հանգամանքը զգալիորեն դժվարացնում է նման դպրոցականների ուսումնաաշխատանքային գործունեության արդյունավետ կազմակերպումը:

Գրականության տվյալները և գործնականում կատարած աշխատանքները ցույց են տալիս, որ «Տեխնոլոգիա» առարկայի դասավանդման արդյունքում ձևավորում է աշխատանքի, բնավորության, սեփական առողջության հանդեպ դրական վերաբերմունք, դպրոցականներն ստանում են աշխարհի մասնագիտությունների վերաբերյալ ընդհանուր պատկերացումներ, ծանոթանում են բնական և արհեստական ծագմամբ տարբեր նյութերի հետ:

Այս գլխում ներկայացված ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ թեման արդիական է, սակայն ունի խորը ուսումնասիրության կարիք, թերի են լուսաբանված մանակավարժական այն պայմանները, որոնք կնպաստեն մտավոր զարգացման խնդիրներով կրտսեր դպրոցականի ուսումնաաշխատանքային գործունեության նախադրյալների ձևավորմանը, աննշան տեղ է հատկացված ուսուցչի մանկավարժական գործունեությանը, որը նպաստում է ուսման մեջ դպրոցականի անձի ձևավորմանը:

Վերոնշյալը փաստում է «Տեխնոլոգիա» առարկայի դասավանդման ընթացքում այդ դպրոցականների ուսումնաաշխատանքային գործունեության կազմակերպման և անցկացման օրինակելի ծրագրի, միջոցների, մեթոդների և դրանց կիրառման պայմանների ստեղծման անհրաժեշտության մասին:

Երկրորդ՝ «Հատուկ (օժանդակ) դպրոցում «Տեխնոլոգիա» առարկայի դասավանդման դրվածքի վերլուծությունը» գլխում, ներկայացված են նշված առարկայի բովանդակության, դասավանդման դրվածքի, առարկայի դասավանդման ծրագրային նյութի վերլուծությունը, մտավոր զարգացման խնդիրներով կրտսեր դպրոցականի ուսումնաաշխատանքային գործունեության կազմակերպման հարցերի վերաբերյալ հատուկ (օժանդակ) և ներառական կրթություն իրականացնող դպրոցների ուսուցիչների և դաստիարակների, մանկավարժական ԲՈՒՀ-ի հատուկ կրթության ֆակուլտետի օլիգոֆրենոմանկավարժություն բաժնի բարձր կուրսի ուսանողների տեղեկացվածության մակարդակի հետազոտության արդյունքները, ինչպես նաև «Տեխնոլոգիա» առարկայի շրջանակներում տվյալ երեխաների աշխատանքային կարողությունների ուսումնասիրության արդյունքները:

Հաստատված է, որ կրտսեր տարիքում «Տեխնոլոգիա» առարկան նպատակաուղղված է լուծելու մի շարք խնդիրներ՝ անձնային դրական հատկանիշների դաստիարակում (աշխատասիրություն, հաստատակամություն), աշխատանքի ձևերի մասին տարրական գիտելիքների հաղորդում, աշխատանքում կազմակերպչական կարողությունների ձևավորում (ժամանակին գալ պարապմունքներին, ճիշտ դասավորել նյութերն ու գործիքները և այլն):

Սակայն հատուկ (օժանդակ) դպրոցում հանրակրթական դպրոցի «Տեխնոլոգիա» առարկայի ծրագրով դասերի կազմակերպումը դժվարացնում է ուսումնական գործընթացը, իսկ հատուկ (օժանդակ) դպրոցում այդ ծրագրի բացակայությունը կամ թերի մշակվածությունը պետք է դիտել կարևոր խնդիր:

Դա է փաստում սոցիալացման արդյունքները՝ հատուկ (օժանդակ) դպրոցի 53 ուսուցիչներից 45%-ը և ներառական դպրոցի 104 ուսուցիչներից 76,9%-ը կիրառում են հանրակրթական դպրոցի ծրագիրը կամ էլ 1986 թ խորհրդային ժամանակներում մտավոր հետամնաց կրտսեր դպրոցականների համար նշակված «Աշխատանք» առարկայական ծրագիրը, համապատասխանաբար հարցվողների 43,5%-ը և 23,1%-ը դասն անցկացնում են իրենց կողմից մշակված ծրագրով, իսկ հատուկ (օժանդակ) դպրոցի ուսուցիչներից 11,3%-ը, հենվելով սեփական փորձի ու գիտելիքների վրա, դասն անցկացնում է առանց ծրագրի:

Ուշագրավ է, որ հատուկ (օժանդակ) և ներառական դպրոցներում «Տեխնոլոգիա» առարկայի դասավանդման դրվածքի կատարելագործման համար ուսուցիչներից 87,9%-ը նշել են գույքի (կահույք, աշխատանքային գործիքներ և այլն), 80%-ը հատուկ ծրագրի, 87,9%-ը հատուկ դասագրքերի և լրացուցիչ ձեռնարկների անհրաժեշտության մասին: Այս ամենի բացակայությունը բնականաբար հատուկ (օժանդակ) դպրոցում «Տեխնոլոգիա» առարկայի դասավանդումը դժվարացնում է:

Մտավոր զարգացման խնդիրներով կրտսեր դպրոցականների աշխատանքային կարողությունների ուսումնասիրությունը փաստում է, որ «Տեխնոլոգիայի» դասի ժամանակ նրանցից ակտիվ են եղել 25%-ը, պասիվ՝ 35,7%-ը, առաջադրանքը չեն կատարել՝ 33%-ը: Բացահայտվել է նաև, որ աշխատանքի կատարման ընթացքում ծագած դժվարությունները կապված են եղել այդ երեխաների հուզականային ոլորտի առանձնահատկությունների հետ (16%), անբավարար տեղեկացվածության հետ (7%) և այլն:

Այսպիսով՝ տվյալ հետազոտության ստացված արդյունքները թույլ են տվել կատարելու հետևյալ եզրահանգումները՝

- «Տեխնոլոգիա» առարկայի բովանդակության (ծրագրի) վերլուծությունից պարզվել է, որ հատուկ (օժանդակ) դպրոցում հանրակրթական դպրոցի «Տեխնոլոգիա» առարկայական ծրագիրը կիրառելի չէ իր ծավալով, բովանդակությամբ, իսկ 1986թ «Աշխատանք» ծրագիրը չի համապատասխանում ժամանակակից դպրոցի պահանջներին և անհրաժեշտ է «Տեխնոլոգիա» առարկայի օրինակելի ծրագրի մշակում,

- թույլ է առարկայի կապը մտավոր զարգացման խնդիրներով կրտսեր դպրոցականների անձնային որակների և մի շարք կարողությունների զարգացման հետ, բացակայում են անհրաժեշտ պայմանները (դիդակտիկ նյութեր, նստարաններ, գործիքներ, սենյակներ՝ հատուկ կահավորված և այլն), կատարելագործված չի «Տեխնոլոգիա» առարկայի դասավանդման մեթոդիկան,

- անհրաժեշտ է «Տեխնոլոգիա» առարկայի արդյունավետ դասավանդման համար մշակել համապատասխան միջոցներ, մեթոդներ, ուսումնաաշխատանքային գործունեության կազմակերպման օրինակելի համակարգ և դրանց կիրառման մանկավարժական մոտեցումներ:

Երրորդ՝ «Մտավոր զարգացման խնդիրներով կրտսեր դպրոցականի ուսումնաաշխատանքային գործունեության կազմակերպման բովանդակությունը, միջոցները և մանկավարժական մոտեցումները» գլխում, ներկայացված են տվյալ երեխաների ուսումնաաշխատանքային գործունեության կազմակերպման մանկավարժական պայմանների տեսական հիմնավորումը, «Տեխնոլոգիա» առարկան նպատակաուղղված դասավանդելու համար մեր կողմից մշակված օրինակելի համակարգը, մտավոր զարգացման խնդիրներով կրտսեր դպրոցականի հետ բազմաբնույթ աշխատանքների կազմակերպման և անցկացման մոտեցումների, միջոցների, մեթոդների մշակման և դրանց կիրառման պայմանների վերլուծությունը, ինչպես նաև այդ երեխաների ուսումնաաշխատանքային գործունեության կազմակերպման միամյա մանկավարժական փորձարարության արդյունքները:

Մանկավարժական փորձարարությունն իրականացվել է 2009-2010 թթ. Երևանի թիվ 6 հատուկ (օժանդակ) դպրոցում: Փորձարարությունում ընդգրկվել են 3-րդ դասարանի թեթև աստիճանի մտավոր զարգացման խնդիրներ ունեցող 19 դպրոցական, որից 9-ը փորձարարական, 10-ը ստուգողական խմբում:

Մանկավարժական փորձարարությունն անցկացրել ենք մեր կողմից ընտրված, մշակված և համակարգված օրինակելի առաջադրանքներով և եղանակներով, որոնք ուղղված են եղել մտավոր զարգացման խնդիր ունեցող

կրտսեր դպրոցականի ուսումնաաշխատանքային գործունեության արդյունքի հետ կապված պահանջմունքների բավարարմանը (հանելուկային, խճճված իրավիճակի ստեղծում և այլն), կողմնորոշման և աշխատանքի կատարման ընթացքում առաջացած դժվարությունների հաղթահարման ունակությունների զարգացմանը (վարժություններ՝ ուղղված նպատակի իրական լինելու որոշմանը, դժվարությունները կռահելու ունակության ձևավորում), ինչպես նաև աշխատանքի արդյունքի հանդեպ դրական վերաբերմունքի ձևավորմանը (աշխատանքի ցուցադրում, փոքրիկ հաջողությունների ամրապնդում և այլն):

Վերոնշյալ մանկավարժական միջոցները, մեթոդները, աշխատանքի բովանդակությունը ներկայացված են մեր կողմից մշակված օրինակելի համակարգում, որը ենթադրում է այն մանկավարժական պայմանները, որոնք նպաստում են նշված երեխաների ուսումնաաշխատանքային գործունեության կազմակերպմանը և անցկացմանը (գծապատկեր 1):

Համակարգի հիմնական բաժիններն են համարվում՝

- երեխաների հոգեֆիզիկական զարգացման մակարդակի հաշվառում,
- ուսումնաաշխատանքային գործունեության նախադրյալների զարգացում,
- ուսումնաաշխատանքային գործունեության վերաբերյալ տեսական

գիտելիքների ձևավորում,


• «Տեխնոլոգիա» առարկայի գործնական նյութի վերաբերյալ նախնական պատկերացումների ձևավորում,

- մասնագիտական կողմնորոշման ուղղվածության աշխատանքներ:

Առաջարկված մանկավարժական պայմաններն ունեն շտկողագարգացնող ուղղվածություն և դրանց կիրառումը կնպաստի մտավոր զարգացման խնդիր ունեցող կտսեր դպրոցականի ուսումնաաշխատանքային գործունեության կազմակերպման նախադրյալների ձևավորմանը (ընդհանուր և մանր մտորիկայի զարգացում, ըստ ուսումնական նյութի գործնական կարողությունների, կատարվող աշխատանքի հանդեպ հետաքրքրությունների, դժվարությունները հաղթահարելու կարողությունների ձևավորում):

Մանկավարժական փորձարարության արդյունքները փաստում են հիմնախնդրի լուծման համար առաջարկված մոտեցումների մեծ հնարավորությունների մասին: Դա է վկայում դժվարությունները հաղթահարելու կարողության, գործունեության արդյունքի հետ կապված հուզական դրսևորումների, աշխատանքի հանդեպ հետաքրքրությունների, կողմնորոշման կարողությունների ձևավորման, շարժողական ոլորտի կատարելագործման ստացված դրական ցուցանիշները:

Այսպես, եթե մինչ մանկավարժական փորձարարությունը դժվարությունների բնույթն ու հաճախականությունը նկատելի են եղել հետազոտվող երկու խմբի դպրոցականների 20%-ի մոտ, ապա փորձարարությունից հետո փորձարարական խմբում այն նկատելի է եղել 4 (8,9%) դպրոցականի մոտ, իսկ ստուգողական խմբում ցուցանիշների փոփոխությունները գրեթե աննշան էին (աղյուսակ 1):



Գծապատկեր 1. Ուսումնաաշխատանքային գործունեության կազմակերպման մանկավարժական պայմանները


Աղյուսակ 1

Փորձարարության տարբեր փուլերում ուսումնասաշխատանքային գործունեության ընթացքում առաջացած դժվարությունների բնույթը

Դժվարությունների բնույթը	Ցուցանիշներ							
	Փորձարարական խումբ n=9				Ստուգողական խումբ n=10			
	Մինչ փորձ.		Փորձ. հետո		Մինչ.փորձ.		Փորձ.հետո	
	բաց.	%	բաց.	%	բաց.	%	բաց.	%
Անբավարար տեղեկացվածություն	3	33,3	1	11,1	4	40	3	30
Ոչ ձկուն շարժումներ	2	22,2	1	11,1	2	20	2	20
Հուզականային ոլորտ	2	22,2	1	11,1	1	10	1	10
Կարողությունների և ունակությունների տիրապետման ցածր մակարդակ	1	11,1	-	-	2	20	1	10
Օբյեկտիվ դժվարություններ	1	11,1	1	11,1	1	10	1	10

Այս ամենի հետևանքով դպրոցականներն իրենց կատարած աշխատանքում թերացել են (տրամագիր 2):

Այսպես, նկարից երևում է, որ եթե մինչ փորձարարությունը փորձարարական խմբի դպրոցականներից 33,3 %-ի մոտ աշխատանքի կատարած դժվարությունները կապված են եղել անբավարար տեղեկացվածության հետ, ապա փորձարարությունից հետո մեր կողմից առաջարկված մանկավարժական պայմանների կիրառման շնորհիվ նման աշակերտ ընդամենը 11,1% էր: Սրանք այն դպրոցականներն էին, ովքեր տվյալ պահին եղել են անուշադիր, ցրված, որի հետևանքով նրանց մոտ առաջացել են բազմաթիվ հարցեր իրի պատրաստման վերաբերյալ: Մինչ դեռ ստուգողական խմբում անբավարար տեղեկացվածությունը փորձարարությունից առաջ և հետո բերել է հետաքրքրության իջեցման: Փորձարարության արդյունքները ցույց են տվել, որ սովորողների մոտ դժվարությունների բնույթը հիմնականում կապված է եղել ոչ ձկուն շարժումների հետ, բայց նշված պայմանների կիրառման շնորհիվ կանխվել է գործունեության ընթացքում ծագած բացասական երևույթները:



Տր.2 Փորձարարական և ստուգողական խմբերի սովորողների դժվարությունների համեմատական ցուցանիշները

1. Անբավարար տեղեկացվածություն;
2. Ոչ ճկուն շարժումներ;
3. Հուզականային ուղրտ;
4. Կարողությունների և ունակությունների տիրապետման ցածր մակարդակ;
5. Օբյեկտիվ դժվարություններ

մինչ փորձարարությունը
 փորձարարությունից հետո

Հաճախ փորձարարական խմբի աշակերտների 22,2%-ի մոտ, մինչ փորձարարությունը առաջացել են օբյեկտիվ, արտաքին բնույթի դժվարություններ (թելն արձակելու անկարողություն, բութ մկրատով մասեր կտրելու հետևանքով անհաջողություն և այլն), իսկ փորձարարությունից հետո աշակերտներին տալով որակապես անհրաժեշտ գույք նման դժվարություններ նկատվել է 11,1% մոտ: Մինչդեռ ստուգողական խմբում փորձարարությունից առաջ և հետո ցուցանիշների փոփոխություն գրեթե չի եղել:

Նման արդյունքներ եղել են հուզականային ուղրտի առանձնահատկությունների ուսումնասիրության ընթացքում: Այսպես մինչ փորձարարությունը փորձարարական խմբում աշակերտներից 22,2%-ն ունեցել են հուզական բազմաթիվ դրսևորումներ (լաց, հիասթափություն), սակայն փորձարարությունից հետո հանդիպելով դժվարությունների կողմնորոշվել են առաջադրանքի կատարման մեջ և հասցրել են աշխատանքն ավարտին: Մինչդեռ ստուգողական խմբում փորձարարությունից առաջ և հետո նման դարոցականների մոտ նկատվել են աֆֆեկտիվ դրսևորումներ և հրաժարվել են գործունեությունից:

Կապված կարողությունների և ունակությունների տիրապետման հետ, փորձարարության ընթացքում պարզեցինք, որ, եթե մինչ փորձարարությունը

փորձարարական խմբում սովորողներից 11,1%-ն ուներ կարողությունների և ունակությունների ցածր մակարդակ, ապա փորձարարությունից հետո աշակերտների մոտ նկատվել է կատարված աշխատանքի հանդեպ բավարարվածություն, հիացել են իրենց պատրաստածով: Մինչ դեռ ստուգողական խմբում ցուցանիշների էական փոփոխություններ չեն եղել, սա կապված է այն բանի հետ, որ նրանց մոտ բացակայում էր աշխատանքի հանդեպ հետաքրքրությունը: Իսկ օբյեկտիվ դժվարությունների ցուցանիշների փոփոխություններ փորձարարական և ստուգողական խմբերում մանկավարժական փորձարարությունից առաջ և հետո գրեթե չի նկատվել:

Հետազոտության արդյունքները փաստում են, որ փորձարարական խմբի դպրոցականների մոտ նկատվել է գործունեության հետ կապված հուզական դրսևորումների դրական ցուցանիշներ: Այսպես, եթե մինչ փորձարարությունը փորձարարական խմբի սովորողների 44,5%-ն է բավարարում ստացել գործունեության արդյունքից, ապա փորձարարության վերջում ցուցանիշները հասել են 88,8%-ի: Սա խոսում է այն մասին, որ ստացված արդյունքի հետևանքով նրանք ունեցել են հուզական բավարարվածություն և ուրախության զգացում, արդյունքն ունեցել է անձնային նշանակություն, իրենց հաջողության համար հպարտություն են զգացել, պատրաստած իրերը ցուցադրել են հասակակիցներին: Մինչ դեռ ստուգողական խմբում ցուցանիշների տարբերություն չի նկատվել:

Մանկավարժական միամյա փորձարարության արդյունքները փաստում են, որ փորձարարական խմբի մտավոր զարգացման խնդիրներով կրտսեր դպրոցականները փորձարարության վերջում հասել են ուսումնաաշխատանքային գործունեության բարձր արդյունավետության:

Այսպես, փորձարարական խմբի 77,8% սովորողները և ստուգողական խմբի ընդամենը 30%-ն ունեցել են ուսումնա-աշխատանքային գործունեության բարձր արդյունավետություն: Այս երեխաների մոտ դիտվել է գործունեության արդյունքի հետ կապված պահանջմունքների բավականին թեթև և արագ բավարարում: Հաստատվել է, որ գործունեությունը կատարելու ընթացքում սովորողները նպատակին հասնելու ճանապարհին առաջացած դժվարությունները կամ ինքնուրույն կամ ուսուցչի օգնությամբ հաջողությամբ հաղթահարել են: Ընդ որում, դժվարությունները հաղթահարելու հնարավորությունները նրանց ավելի ինքնավստահ են դարձրել: Այս սովորողների գործունեության արդյունքը եղել է պատրաստված իրը, որը գործնականորեն միշտ համապատասխանել է օրինակին, կատարվել է առանց սխալների կամ նրանց փոքր քանակի: Երեխաները շատ զգուշորեն են վերաբերվել իրենց պատրաստած առարկային: Աշխատանքն ավարտելու հետ կապված նրանք ունեցել են բավարարման մեծ զգացում ինչպես գործունեության ընթացքից, այնպես էլ ստացված արդյունքից:

Փորձարարական խմբի 11,1% և ստուգողական խմբի 10% երեխաները տարբերվել են գործունեության արդյունքին հասնելու պահանջմունքների ոչ միշտ բավարարմամբ: Նրանք միշտ կարողացել են հաղթահարել աշխատանքի ընթացքում առաջացած դժվարությունները՝ չկորցնելով գործունեության

հանդեպ հետաքրքրությունները: Հետազոտության արդյունքները վկայել են, որ գործունեության արդյունքը ոչ միշտ է բավարարել երեխաների պահանջմունքները, որն արտահայտվել է անտարբեր վերաբերմունքով: Տվյալ խմբի սովորողների պատրաստածի որակը համապատասխանել է օրինակին, բայց ոչ միշտ են հասցրել կատարել առաջադրանքն ամբողջական ծավալով: Նրանք ունեցել են գործունեությունը կատարելու անհրաժեշտ գիտելիքները, կարողությունները, հմտությունները, որպեսզի առանց հատուկ դժվարությունների ինքնուրույն կատարեն աշխատանքի առաջադրանքները: Բայց, այնուամենայնիվ, աշակերտները տարբերվել են հատուկ անվստահությամբ, անորոշությամբ, առաջադրանքը կատարելու ընթացքում ինքնուրույնության ցածր մակարդակով: Առաջադրանքին ժանոթանալուց և աշխատանքը պլանավորելուց հետո նրանք միանգամից դիմել են ուսուցչի օգնությանը կամ էլ սպասել են՝ չսկսելով աշխատանքը: Հաճախ նրանք դիմել են ուսուցչին, եթե նույնիսկ անհրաժեշտություն էլ չկար:

Գործարարական խմբի 11,1% և ստուգողական խմբի 60% սովորողներին բնորոշ էր ուսումնաաշխատանքային գործունեության ցածր արդյունավետություն: Այս երեխաների պահանջմունքները կամ ընդհանրապես կապ չեն ունեցել գործունեության արդյունքի հետ կամ չեն տիրապետել անհրաժեշտ դրող ուժին: Գործունեության ընթացքում սովորողները հանդիպել են բազմաթիվ դժվարությունների, որոնց հաղթահարելու անկարողությունն առաջացրել է աֆֆեկտիվ ռեակցիաներ կամ հուզական անկում, որն անբարենպաստ է ազդել աշխատանքը շարունակելու ցանկության վրա, ինչպես նաև պատրաստվող իրի որակի վրա: Երեխաները շատ սխալներ են ունեցել՝ հաճախ չնկատելով դրանք: Այս երեխաների գործունեության արդյունքը երբեմն չի համապատասխանել օրինակին: Գործունեության արդյունքը կարող է նրանց բավարարել ընդամենն այնքան, որքան կբավարարի դասին ստացված գնահատականը կամ բավարարված կլինեն այլ պահանջմունքները:

Այսպիսով, հատուկ (օժանդակ) դպրոցում մտավոր զարգացման խնդիր ունեցող կրտսեր դպրոցականների ուսումնաաշխատանքային գործունեության կազմակերպման մեր կողմից առաջարկված տեսական մոտեցումները, մանկավարժական պայմանները թույլ են տալիս «Տեխնոլոգիա» առարկայի դասավանդման արդյունավետության բարձրացմանը:

Մեր կողմից իրականացրած մանկավարժական և տեսական ուսումնասիրությունների հանրագումարում ի վերջո հանգել ենք հետևյալ **հետևությունների՝**

1. Հետազոտվող հիմնախնդրի անբավարար մշակվածությունը, ուսումնաաշխատանքային գործունեության կազմակերպման մանկավարժական պայմանների օրինակելի համակարգի բացակայությունը, «Տեխնոլոգիա» առարկայի արդյունավետ դասավանդման համար ժամանակակից միջոցների, մեթոդների թերի մշակվածությունը, հիմնախնդրի վերաբերյալ ուսուցիչների և դաստիարակների իրազեկվածության ցածր մակարդակը զգալիորեն դժվարացնում են այդ առարկայի դասավանդման ընթացքում ուսումնաաշխատանքային գործունեության կազմակերպումը, ինչպես նաև

մտավոր զարգացման խնդիրներով կրտսեր դպրոցականի տեսական գիտելիքների և գործնական կարողությունների ձևավորումը: Սույն հանգամանքը փաստում է նշված խնդիրների լուծման անհրաժեշտությունը:

2. Հաստատված է, որ «Տեխնոլոգիա» առարկայի դասավանդման ընթացքում մտավոր զարգացման խնդիրներով կրտսեր դպրոցականի ուսումնաաշխատանքային գործունեության կազմակերպման դժվարությունները կապված են մի շարք գործոնների հետ՝ հաշվի չի առնվում այդ երեխաների հոգեֆիզիկական զարգացման մակարդակը, ուսումնաաշխատանքային գործունեության նախադրյալների զարգացման և դրա վերաբերյալ տեսական գիտելիքների, «Տեխնոլոգիա» առարկայի գործնական նյութի վերաբերյալ նախնական պատկերացումների ձևավորման, ինչպես նաև մասնագիտական կողմնորոշման ուղղվածության աշխատանքները: Այս ամենի հետևանքով տվյալ առարկայի դասավանդման ընթացքում մտավոր զարգացման խնդիրներով կրտսեր դպրոցականներից ակտիվ էին եղել միայն 25%-ը, իսկ մնացածները կամ պասիվ էին կամ էլ առաջադրանքը չէին կատարում:

3. Անցկացված հետազոտությունը փաստում է, որ հատուկ (օժանդակ) դպրոցում «Տեխնոլոգիա» առարկայի արդյունավետ դասավանդման համար անհրաժեշտ է՝

- առարկայական օրինակելի ծրագրի, ուսումնաաշխատանքային գործունեության կազմակերպման մանակավարժական պայմանների համակարգի, համապատասխան միջոցների, մեթոդների մշակում և կատարելագործում,

- դպրոցականների դրական հատկանիշների դաստիարակում՝ աշխատասիրություն, աշխատելու կարողություն և այլն,

- աշխատանքի հանդեպ հետաքրքրությունների ձևավորում և այլն:

Ատենախոսությունում ներկայացված են տվյալ խնդիրների լուծման հիմնական ուղիները, միջոցները, մեթոդները և դրանց կիրառման պայմանները:

4. Հետազոտությունները ցույց են տվել, որ մեր կողմից առաջարկվող մոտեցումների, միջոցների և մեթոդների կիրառումը մանկավարժական փորձարարությունում ընդհանուր առմամբ թույլ տվեց նշանակալիորեն բարձրացնելու մտավոր զարգացման խնդիրներով կրտսեր դպրոցականի ուսումնաաշխատանքային գործունեության արդյունավետությունը, որի արդյունքում՝

- հետազոտվողների մեծ մասն աշխատանքի կատարման ընթացքում հանդիպած դժվարությունները հաջողությամբ հաղթահարել են, զգուշորեն են վերաբերվել իրենց պատրաստած իրին,

- հետազոտվողներն ունեցել են պահանջմունքների բավարարման զգացում կատարած գործունեության արդյունքից, նրանց համար գրավիչ էր իրենց կողմից պատրաստած առարկան, անգամ ցանկություն են ունեցել օգնել ընկերներին,

- հետազոտվողներն ունեցել են նաև գործունեության արդյունքի հետ կապված դրական հույզեր: Նրանք զգացել են բավարարվածություն և

ուրախություն, իրենց հաջողությունների համար հպարտություն, պատրաստած իրը ցուցադրել են հասակակիցներին:

5. Ատենախոսությունում ցույց է տրված, որ «Տեխնոլոգիայի» դասի ժամանակ մտավոր զարգացման խնդիրներով կրտսեր դպրոցականի ուսումնաաշխատանքային գործունեության կազմակերպման համար առաջարկվող մոտեցումների արդյունավետությունը, նրանց շարժումների կորդինացիայի և ճշգրտության, պատրաստվող առարկայի մասին բավարար տեղեկացվածության, աշխատանքային կարողությունների և ունակությունների տիրապետման մակարդակի կատարելագործումը: Այսպես՝

- եթե մինչ փորձարարությունը փորձարարական խմբի դպրոցականներից 22,2%-ն ուներ շարժումների կորդինացիայի և ճշգրտության խանգարումներ, ապա փորձարարությունից հետո այն կազմել է 11,1%,
- պատրաստվող առարկայի վերաբերյալ անբավարար տեղեկացվածությունը, եթե մինչ փորձարարությունը կազմում էր 33,3%, ապա փորձարարությունից հետո ցուցանիշները բարելավվել են,
- եթե մինչ փորձարարությունը դպրոցականներից աշխատանքային կարողությունների և ունակությունների տիրապետման ցուցանիշները ցածր էին, ապա փորձարարությունից հետո եղել են միայն դրական արդյունքներ:

6. Անցկացված հետազոտության արդյունքները փաստում են «Տեխնոլոգիա» առարկայի դասավանդման ընթացքում մտավոր զարգացման խնդիրներ ունեցող կրտսեր դպրոցականի ուսումնաաշխատանքային գործունեության կազմակերպման համար առաջարկված մոտեցումների արդյունավետության մասին: Նշվածը հաստատվում է առաջարկված միջոցների, մեթոդների և պայմանների կիրառմամբ ու գործնականում դրանց ներդրմամբ:

Հետազոտության հիմնական դրույթները և արդյունքներն արտացոլված են հետևյալ **հրապարակումներում՝**

1. Погосян С. С., Мотив в системе индивидуальности личности /Հատուկ մանկավարժության և հոգեբանության գիտամեթոդական ժողովածու, Երևան, 2009, N 8, էջ 202-205

2. Погосян С. С., Роль привычек в формировании характера и потребности у умственно отсталых детей /54-րդ գիտաժողովի նյութերի ժողովածու նվիրված Խ. Արուսյանի ծննդյան 200-ամյակին I ՊՐԱԿ, Երևան, 2010, էջ 128-130

3. Погосян С. С., Особенности мотивов учебной деятельности умственно отсталых учащихся младших классов./ԼՂՀ ԿԳՆ, Արցախի պետական համալսարան, միջազգային գիտաժողովի նյութեր, նվիրված Ար. ՊՀ հիմնադրամ 40-ամյակին, Ստեփանակերտ, 2009, էջ 166-168.

4. Պողոսյան Ս.Ս., Մտավոր հետամնաց կրտսեր դպրոցականների ուսումնաաշխատանքային գործունեության արդյունավետության բարձրացման մանկավարժական ուղիները//«Սխիթար Գոշ» գիտամեթոդական հանդես 7-9, Վանաձոր, 2013, էջ 52-56

ПОГОСЯН САТЕНИК САМВЕЛОВНА

ПЕДАГОГИЧЕСКИЕ УСЛОВИЯ ОРГАНИЗАЦИИ УЧЕБНО-ТРУДОВОЙ
ДЕЯТЕЛЬНОСТИ ДЕТЕЙ С ПРОБЛЕМАМИ УМСТВЕННОГО РАЗВИТИЯ

Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук
по специальности 13.00.03 “Специальная педагогика”.

Защита диссертации состоится 04 декабря 2014 г. в 12⁰⁰ часов на заседании
специализированного совета 020 ВАК “Педагогика” по присуждению ученых
степеней при Армянском государственном педагогическом университете им.
Х. Абовяна по адресу: 0010, Ереван, ул. Тигран Меца, 17

РЕЗЮМЕ

Актуальность исследования. Известно, что в общей системе
обучения и воспитания детей с нарушением умственного развития вопросы
трудового воспитания, приобретения практических умений и навыков,
подготовка их к самостоятельной жизни всегда занимали ведущее место.
Отдельным аспектам этой проблемы посвящены исследования многих
ведущих специалистов.

Однако с введением предмета “Технология” в начальных классах
специальной (вспомогательной) школы подходы к трудовому воспитанию и
развитию учебно-трудоу деятельности у умственно отсталых младших
школьников требуют значительного совершенствования. До последнего
времени не разработаны примерная программа, средства, методы и
педагогические подходы для развития учебно-трудоу деятельности в
рамках преподаваемого предмета у умственно отсталых младших
школьников, не изучены уровень информированности учителей и
воспитателей, работающих с этими детьми, в изучаемых вопросах, не
определена степень развития учебно-трудоу деятельности у этих
учащихся. Решение этих и других подобных вопросов и определяет
актуальность проблемы исследования, ее теоретическую, практическую и
социальную значимость.

Цель исследования – разработать педагогические пути, средства и
методы для развития учебно-трудоу деятельности у умственно отсталых
младших школьников.

Задачи исследования:

1. Изучить постановку работы по организации и проведении учебно-трудовой деятельности с младшими школьниками с нарушениями умственного развития.

2. Определить уровень развития умений и навыков учебно-трудовой деятельности у умственно отсталых младших школьников.

3. Разработать педагогические пути, средства и методы развития учебно-трудовой деятельности у умственно отсталых младших школьников и экспериментально обосновать их эффективность.

Научная новизна исследования:

- изучена и проанализирована постановка работы по организации и проведении учебно-трудовой деятельности в специальных (вспомогательных) школах республики;

- определен уровень информированности учителей и воспитателей специальной (вспомогательной) и интегративной школ в изучаемых вопросах;

- определен уровень развития трудовых способностей умственно отсталых младших школьников;

- разработаны содержание, средства, методы и педагогические условия их применения для развития учебно-трудовой деятельности у младших школьников с нарушениями умственного развития.

Теоретическая значимость исследования определяется теоретическим обоснованием эффективности рекомендованных подходов, средств, методов и условий их применения для совершенствования организации и проведения учебно-трудовой деятельности с умственно отсталыми младшими школьниками, а также полученных результатов исследования.

Апробация результатов исследования. Основные положения, результаты и выводы исследования докладывались и обсуждались на заседаниях кафедры специальной педагогики и психологии АГПУ им. Х. Абовяна (2009-2014 г.г.), на педагогическом совете специальной (вспомогательной) школах NN 6, 12, 17(2011-2013 г.г.).

Содержание исследования отражено в структуре диссертации, которая состоит из введения, трех глав, выводов, списка использованной литературы и приложения.

По теме диссертации опубликовано 4 статьи.

POGHOSYAN SATENIK SAMVEL

THE PEDAGOGICAL CONDITIONS OF ORGANIZATION OF LEARNING AND WORKING PROCESS ACTIVITY OF PRIMARY SCHOOLCHILDREN WITH MENTAL DEVELOPMENT PROBLEMS

Thesis for degree of candidate of pedagogical sciences, specialty of 13.00.03- “Special Pedagogy”

The defense of the dissertation will take place on 04 December, 2014, at 12.00 at the meeting of the Specialized Pedagogical Committee “Pedagogy” 020 HAC for granting scientific degrees at the Armenian State Pedagogical University after Kh. Abovyan (address: Tigran Mets street 17, 375010, Yerevan, Armenia).

SUMMARY

The relevance of the research. It is known that the education of children with mental disabilities, the acquisition of practical skills, preparation of those children for independent life have always occupied a leading position in general system of education. Many leading experts studied certain aspects of this issue. However, with the introduction of the new subject “technology” in special (auxiliary) schools, the strategies of work with intellectual problems children require significant improvements. Until recently, there has not been developed a model program, means, methods and pedagogical approaches for teaching and working process with children with mental disabilities in schools, the level of awareness of teachers and educators of these children have not been studied and the level of development of working and learning process of the children have not been examined. Above mentioned problems and also other ones, determine the relevance of the research problem, its theoretical, practical and social implications.

The aim of the research – to develop pedagogical strategies, means and methods for improvement of learning and working process with children with mental disabilities.

Objectives of the study

- To explore the way of organization process of work with intellectual disabilities children.
- To determine the level of development of knowledge and skills of children with mental disabilities.
- To develop pedagogical strategies, means and methods of learning and working with mental disabilities and to experimentally prove their effectiveness.

Scientific novelty of the research .

- The setting of the work aimed at organization and conduction of learning-working process in special schools in the republic is studied and analyzed
 - The level of awareness of teachers and educators in special (auxiliary) and integrative schools have been determined concerning these problems
 - The level of development of working skills of mentally retarded children has been determined .
 - The content, tools, pedagogical conditions and their use in the development of learning and working process of children with mental disabilities have been developed in primary schools

The theoretical significance of the research is determined by the theoretical basis of the effectiveness of the recommended approaches, tools, methods and the conditions of their usage for the improvement of the organization and conduction of teaching and working process with mentally retarded children , as well as the results of the study. Testing results of the study.

The main results and conclusions of the study were presented and discussed at the meetings of the Department of Special Pedagogy and Psychology Armenian State Pedagogical University after KH. Abovyan (2009-2014 years), and at the teachers' council in a special (auxiliary) schools NN 6,12,17 (2011-2013 years).

The content of the research is reflected in the structure of the dissertation, which consists of an introduction, three chapters, conclusions, bibliography and appendices. Four articles have been published on the topic of the dissertation.